Հայաստանի կենսաբ. հանդես, 2(63), 2011

ՕԳՏԱԿԱՐ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

«Երիտասարդ կենսաբանների ասոցիացիա» ՀԿ-ն, Երևանի պետական համալսարանի և Եվրոպական կենսաքիմիկոսների ասոցիացիաների ֆեդերացիայի (ԵԿԱՖ, FEBS) աջակցությամբ, 2011թ. փետրվարի 20-26-ը կազմակերպել էր FEBS-ի ժամանակակից դասախոսությունների շարք՝ «Ժամանակակից գենետիկա. գենոմային անկայունություն և դրա պատասխանները» խորագրով: Միջոցառման ձևաչափն էր՝ 40-45 րոպե տևողությամբ դասախոսություններ: Դասախոսությունների ընթացքում լայնորեն քննարկվեցին գենետիկական մուտացիաների դերը քաղցկեղի առաջացման և իմունային համակարգի կենսագործունեության ժամանակ, ինչպես նաև ներկայացվեցին գենետիկայի ոլորտում կիրառվող նորագույն մեթոդները: Միջոցառման ընթացքում դասախոսություններով հանդես եկան գենետիկայի և մոլեկուլային կենսաբանության առաջատար մասնագետներ Հայաստանից և արտերկրից: Դասընթացի շրջանակներում արտասահմանից Հայաստան էին ժամանել 12 գիտնական, այդ թվում Նոբելյան մրցանակակիր, պրոֆեսոր Թիմ Հանթը (Քաղցկեղի ուսումնասիրության ինստիտուտ, Մեծ Բրիտանիա), ով հանդես եկավ բաց դասախոսությամբ ,Պրոտեին ֆոսֆատազների կարգավորումը միտոզին անցման և միտոզից դուրս գալու գործընթացներումե թեմայով: Դասախոսություններով հանդես եկան նաև պրոֆ. Մայքլ Նյուբերգերը (Քեմբրիջի համալսարան, Մեծ Բրիտանիա), պրոֆ. Սուսան Ուոլեսը (Վերմոնտի համալսարան, ԱՄՆ), պրոֆ. Պիթեր Մաքիյուջը (Օքսֆորդի համալսարան, Մեծ Բրիտանիա), պրոֆ. Միտսուհիրո Յանագիդան (Կիոտոյի համալսարան, Ճապոնիա), պրոֆ. Գրեգ Համփիկյանը (Բոյզեյի համալսարան, ԱՄՆ) և այլոք: Միջոցառմանը մասնակցում էին 49 երիտասարդ գիտնականներ և ուսանողներ աշխարհի 17 երկրներից և Հայաստանից: Երիտասարդ գիտնականները ներկայացրեցին իրենց աշխատանքները ստենդային և բանավոր զեկույցների տեսքով: Լավագույն զեկուցումներն արժանացան պարգևների: Դասախոսությունների նյութերը և մասնակիցների զեկուցումների թեզիսները տպագրվել են առանձին թեզիսների ժողովածուի տեսքով, որը կարելի է բեռնել www.yba.am կայքից:

Դասախոսությունների շարքի շրջանակներում տեղի ունեցավ նաև «Գիտության և հասարակության ապագան» խորագրով կլոր սեղան-քննարկում՝ Նոբելյան մրցանակակիր՝ Թիմ Հանթի, ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն՝ պրոֆ. Աննա Բոյաջյանի, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի տնօրեն՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Գևորգ Պողոսյանի և ՀՀ նախկին արտգործնախարար, «Սիվիլիթաս» հիմնադրամի նախագահ՝ Վարդան Օսկանյանի մասնակցությամբ: Կլոր սեղանը վարեց ԵՊՀ Գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռուբեն Հարությունյանը: Կլոր սեղանի ընթացքում քննարկվեցին գիտության առջև ծառացած մարտահրավերները, գիտության դերը հասարակության զարգացման գործում, ինչպես նաև երիտասարդ գիտնականների խնդիրները: Միջոցառման շրջանակներում կազմակերպվեց նաև «Կանանց խնդիրները գիտության ոլորտում» թեմայով քննարկում, որի ընթացքում քննարկվեցին գիտության ոլորտում ներգրավված կանանց դերը, խնդիրները և դրանց հնարավոր լուծման ուղիները:

Խմբագրություն